Ազանկ անարդար եւ ապարդիւն ընկերութեանց յիշատակը կարող է վերնասել օգտակարութեան հաստատութեանն ու զարգացմանը, այնու ամենայնիւ բարեսէր և անվհատ սրտերը անկասելի իմն արիութեամբ յօգուտ ազգին և նորա մատաղ սերունդին կը մրցին տակաւին առաթուր հարկանելու այն ամեն խոչընդոտներն որք անձնական անարգ շահու բաղձանքէն թելադրեալ արգելք կը դառնան ազգօգուտ հաստատութեանց յարատեւութեան։ Այսպիսի արիական մրցման գովելի փոյթ մը կը տեսնուի Ատանայի ազգայնոց մէջ։ Արդէն ուրախութեամբ լսած էինք Անձնուէր անուն ընկերութեան մը հաստատութիւնը և սրտագին մաղթած էինք ու կը մաղթեմք միշտ նորա արդիւնաւոր յարատեւութեանը համար. իսկ այս օրերս հասած նամակէ մը բերկրութեամբ սրտի կ'իմանամք որ յաջողակութեամբ կը յառաջանայ նոյն ընկերութիւը, և սկսած է օգտակար ձեռնարկութիւններու. իշխանք և ժողովրդականք սիրալիր համակրութեամբ ընդունած են սոյն ընկերութիւնք իւր խոհեմ ընթացքն և օգտակար առաջադրութեանցը համար. ուստի Սեպտեմբեր 24 երորդ օրը համակամ հաճութեամբ ժողոված են յեկեղեցին և հանգանակութիւն բանալով ստորագրած ու չափաւոր գումար մի գոյացուցած են, և տակաւին ալ կը շարունակեն. առ այժմ գոյացած արդիւնքը գործածելով փութացեր են Հայերէն, Թաղղիարէն եւ՝ Տաճկերէն լեզուաց դասատուներ բերելու համար Պոլիս գրել. կը յուսամք որ Ընկերութիւնը ազգասէր և աշխատասէր դասատուաց հանդիպելով իւր օգտակար նպատակին կը հասնի եւ Ատանայի մեր ազգայինք ալ քիչ միջոցի մէջ կը զարգանան ազգայնութեան փափուկ զգացմամբ, օգտակար գիտութեամբ և կրթութեամբ։

Կը խնդրեմք Ատանայի մեր համազգի եղբայրներէն որ իրենց մէջ և բուն իրենցմէ ծնած այս բարի զաւակը, այս առաքինի ընկերութիւնը գգուեն ու խնամեն և քաջալերեն, քանզի իրենցմէ ծնած լինելով իրենցմէ պէտք է սընանի որպէս զի նա ալ իրենց ապագայ սերունդը սնուցանէ։

Կը քաջալերեմք Անձնուէր Ընկերութեան պատուս բժան անդամներն ալ, որ չի վհատին իրենց մրցման ասպարիզին մէջ, արիութեամբ ջանան իրենց բարի նպատակին հասնելու, օրինակ ունենալով Պոլսոյ համանուն ընկերութիւնը և գիտնալով որ ամեն մեծ գործեր իրենց մեծամեծ դժուարութիւններն ունին, քաջութիւնը անոնց յաղթելն է։ Կատարեալ գովեսան ու ճշմարիտ փառքը գործոյն յաջող վախճանէն կախում ունի, այսպիսի գովեստից եւ այսպիսի փառաց արժանի լինելու համար իրաք անձնուէր լինելու է, անվհատ արիութեամբ, ճշմարտութեամբ և արդարութեամբ գործելու է. այն առեն ձեռնտուութիւնք ալ չեն պակսիր։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամսոյս 5ին Օգոստափաս Սուլթանին ծնդեան տարեդարձին առթիւ գիշերը ճրագալուսութեան հանդէս կատարեցաւ։

—8ին տեղւոյս Կառավարիչ Վսեմ. Նազիֆ Փաշան Յոպոպ ելնելով հետեւեալ օրը 9ին, երեկոյեան դէմ քաղաքս հասաւ մեծ հանդիսիւ, և ընկերակցութեամբ պաշտօնաւոր և մեծամեծ անձանց, հանդերձ հիւպատոսաց թարգմաններով և էսքորթներով։

digitised by A.R.A.R.@

—Նոյն օրը քաղաքս հասաւ Աւստրիոյ Գ՝օրդ—Սախի Պ. Հիւպատոսը ուխտի համար և որ ամսոյս 13ին վերադարձաւ։

—15 գիշերը ժամը 3ին Օլոեմպուրկի իշխանը քաղաքս ժամանեց Նորին մեծութիւնը ցամաքային ճամբորդութիւն ընել չուզելով Պերութէն բաժնուած էր Ն. Ի. Նիգոլա կայսերազուն դուքսէն՝ որ կուզէր ցամաքաւ գալ. այս առթիւ Յունաց Ս. Պատրիարքը Նապլուս գնաց Ն. Վ սեմութիւնը դիմաւորելու. և հոն չգտնելով մինչև Նազարէթ գնաց, ուրկէ ընկերանալով Կայսերազուն իշխանին՝ շրջագայել ուզած տեղերը՝ Նապլուս, Յորդանան և այլն շրջելով ամսոյս 26ին ժամը 8ին Ս. Երուսաղէմ մտան Նորին Բարձրութիւնը ինչպէս նաև Լիխթէնմպուրկի իշխանը։ Դիմաւորելու փութացին տեղւոյս Կառավարիչ Վ. Նազիֆ Փաշան հետևակ և ձիաւոր զօրք, Տերութեանց Հիւպատոսք, մեր Ս. Պատրիարքը, քաղաքիս երևելի անձինք բոլորն ալ իրենց համագնացութիւնը։

Գերմանիայի ձորէն քիչ մի վեր ընդունելութեան համար վրաններ դրուած էին. զինքը դիմաւորել գացողներն ըստ իւրաքանչիւր աստիճանի պարտ ու պատշաճ յարգանօք ընդունելէն վերջը Նորին Վ սեմութիւնը մեծ հանդիսիւ քաղաքիս արեւելեան (պապ էլ-պապի) սուրբը Աստուածածնի ըսուած դրնէն մտնելով եկաւ ուղղակի Իսուրբ Յարութիւն, Յունաց Ս. Պատրիարքը հանդերձ միաբանութեամբ կրօնական պատրաստութիւններով դիմաւորեցին և նոյն հանդիսաւոր թափորիւ բոլոր ուխտատեղիքը շուրջ ածելով տարան Ի Պատրիարքարան. և անոր Ռուսաց Հիւպատոսարանը գնաց ուր իրեն համար օթեւան պատրաստուած էր։

Հետեւեալ օրը Համբարձման լեռն ու Բեթանեայ շրջեցաւ, գիշերը տեղւոյս հիւպատոսներն թեյի հրաւիրեց։ Շաբաթ առաւօտ Ռուսաց վանքի մեծ եկեղեցւոյն օծման հանդէսը կատարեցաւ. հանդիսապետ էր Յունաց Պատրիարքը և մատակարարաբար Ս. Խորհրդոց, Ս. Պատարագ ևս մատոյց յունարէն եւ Ռուսերէն երգեցողութեամբ, ուր ներկայ էր Նորին Վ սեմութիւնը համագնաստով Նորին Վ սեմ. դուքսը կիւրակի գիշեր Ս. Գերեզմանի վերայ հաղորդուեցաւ, ուր պատարագիչ էր Յունաց Պատրիարքը և մեծ բազմութիւն ներկայ էր։ Ս. Պատարագի միջոցին Ս. Պատրիարքը Կենաց փայտի մասունք պարունակող խաչ մի իւր ձեռքը կախեց Դուքսին կուրծքը։ Նոյն օրը առաւօտուն Նորին Բարձրութիւնը Բեթղեհեմ գնաց, և վերադարձաւ, և քանի մի անձանց պատուանշաններ շնորհեց—Նորին Բարձրութիւնը չը հաճեցաւ վանուցս այցելութիւն ընել, այլ ամենապարանոք երկուշաբաթի (30) առաւօտ ժամը 4ին մեկնեցաւ քաղաքէս, ընկերակցութիւն Յունաց Ս. Պատրիարքին, Ռուսաց Հիւպատոսին և բազմաթիւ ձիաւոր զօրաց, քաղաքիս Վ սեմ. Կառավարիչն ալ բաւական տեղ ընկերանալով դարձաւ։

—Նոխորդ թուով Յիսուսեան վարդապետի մը բողոքական լինելը ծանուցինք, ամսոյս 20ին յիշեալ վարդապետը տեղւոյս ս տինաց պատրիարքական փոխանորդին աղերսագիր մատոյց որ զինքը վերստին ընդունին միաբանութիւնը և քահանայից կարգը. խնդրելն ընդունեցաւ, բայց տակաւին պատարագելն արգիլուած է։ Հաստատուն սկզբունք չունենալ, կամ սկզբունքը կրից զսկել սոսկալի բան է, մարդն ատանդական կը տատացնէ, կ՝երեւի թէ այս անձը չնչին նպատակ մի ունէր, որուն հասնելու համար բողոքական եղաւ, բաց տեսնելով, որ չի պիտի կրնայ հասնիլ, և հասկնալով որ ոչինչ է իւր խորհուրդը, ստիպուած է դառնալ։

—Ամսոյս վերջերը սկսան անձրեւք առատութեամբ յաճախել. կը լսեմք թէ Սար—Սափայի կողմերը քանի մը հոլիւք իրենց ոչխարաց խմբովը դժբաղդաբար հեղհեղի յորդութեան կուր եղած են։

digitised by A.R.A.R.@